ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2024

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ	
ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ	

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Ո՞ր օկտավաներն են շրջապատում փոքր օկտավան.**

1) առաջին և երկրորդ օկտավաները
2) մեծ և առաջին օկտավաները
3) մեծ և կոնտր օկտավաները
4) կոնտր և սուբկոնտր օկտավաները

2 **Որո՞նք են նոտագրությունը կրճատող և պարզեցնող նշանները.**

1) արպեջատո, ստակկատո
2) վոլտա, կոդա
3) տրեմոլո, ռեպրիզա
4) էքսպոզիցիա, ռեպրիզա

3 **Ինչպե՞ս է կոչվում հնչման աստիճանաբար մեղմացումը երաժշտության մեջ.**

1) կրեշչենդո
2) դիմինուենդո
3) պիանիսիմո
4) սֆորցանդո

4 **Ինտերվալներն ունեն երկու մեծություն.**

1) աստիճանային և տոնային
2) բացարձակ և հարաբերական
3) հիմնական և լրացուցիչ
4) հիմնական և օժանդակ

5 **Ո՞ր շարքում է թվարկված ինտերվալների ճիշտ հաջորդականությունը.**

1) կվինտա, սեքստա, սեպտիմա
2) պրիմա, տերցիա, կվարտա
3) կվարտա, սեպտիմա, օկտավա
4) սեկունդա, տերցիա, կվինտա

6 **Մաժորի և մինորի զույգ տոնայնությունները լինում են.**

1) համանուն, դիատոնիկ, խրոմատիկ
2) զուգահեռ, համանուն, էնհարմոնիկ հավասար
3) դիատոնիկ, էնհարմոնիկ հավասար, խրոմատիկ
4) զուգահեռ, ազգակից, համանուն

7 **Համանուն տոնյանություններն ունեն**

1) բանալու միևնույն նշաններ, տարբեր տոնիկաներ, տարբեր հնչյունաշարեր
2) միևնույն հնչողություն, տարբեր գրություն և տարբեր նշանակություն
3) միևնույն տոնիկաներ, միևնույն հնչյունաշարեր, տարբեր կառուցվածքներ
4) միևնույն տոնիկաներ, բանալու տարբեր նշաններ, տարբեր հնչյունաշարեր

8 **Տոնայնական փոխհարաբերությունների տեսակներն են.**

1) շեղում, մոդուլյացիա (զարտուղում), տրանսպոզիցիա
2) համադրում, հակադրում, փոխադրում
3) շեղում, մոդուլյացիա (զարտուղում), համադրում
4) մոդուլյացիա (զարտուղում), շեղում, հակադրում

9 **Ինտերվալ /intervallum/ թարգմանաբար նշանակում է**

1) փոխհարաբերություն
2) տարածություն
3) զուգակցություն
4) բարձրություն

10 **Մաժորում տոնիկական եռահնչյունն ունի հետևյալ կառուցվածքը.**

1) մ.3 +մծց.3
2) մ.3 +մ.3
3) մ.3 + փ.3
4) փ.3 +մ.3

11 **Հարմոնիկ մինորում ...**

1) վերընթաց շարժման ժամանակ 6-րդ և 7-րդ աստիճանները բարձրանում են կես տոնով, վարընթաց շարժման ժամանակ՝ իջնում
2) վերընթաց և վարընթաց շարժման ժամանակ 7-րդ աստիճանը բարձրանում է կես տոնով
3) վերընթաց շարժման ժամանակ 7-րդ աստիճանը բարձրանում է կես տոնով, վարընթաց շարժման ժամանակ՝ իջնում
4) վերընթաց և վարընթաց շարժման ժամանակ 6-րդ աստիճանը բարձրանում է կես տոնով

12 **Ինչպե՞ս գրառել հնչյունի տևողությունը, եթե այն տևում է քառորդ + ութերորդական.**

1) քառորդ կետով
2) կես նոտա
3) երկու քառորդ կետով
4) քառորդ պաուզայով

13 **Դասական ֆուգաները սովորաբար ունեն**

1) քառամաս կառուցվածք
2) երկմաս կամ եռամաս կառուցվածք
3) երկմաս կառուցվածք
4) միամաս կառուցվածք

14 **Ո՞ր ձայնաստիճանը ցույց տվող ձեռքի նշանն է ցուցադրված տվյալ նկարում.**

1) լա
2) սի
3) սո
4) դո

15 **Երաժշտական ո՞ր ձևն է հիմնվում երկու հակադիր կերպարային ոլորտների վրա.**

1) վարիացիոն ձև
2) սոնատային ձև
3) ռոնդո-սոնատային ձև
4) ռոնդո ձև

16 **Այն չափերը, որոնք առաջանում են միանման պարզ չափերից, կոչվում են**

1) փոփոխական չափեր
2) բարդ չափեր
3) մեջընդմիջվող չափեր
4) բարդ խառը չափեր

17 **Պարզ երկմաս ձևը լինում է**

1) միատոնայնական և զարտուղող
2) նորմատիվ և ոչ նորմատիվ
3) մոնոթեմատիկ և բազմաթեմատիկ
4) ռեպրիզայով և առանց ռեպրիզայի

18 **Հայկական ժողովրդական երգարվեստում ինչպե՞ս է կոչվում մեծացրած սեկունդայով ձայնակարգը (լադը).**

1) էոլական
2) դորիական
3) հարմոնիկ կամ երկակի
4) միքսոլիդիական

19 **Նշել ճիշտ տողը, որտեղ առկա են հայկական ժողովրդական երգերին բնորոշ օժանդակ հենակետերը.**

1) տերցիային, կվինտային, սեքստային
2) կվարտային, սեքստային, սեպտիմային
3) սեկունդային, կվարտային, սեպտիմային
4) տերցիային, կվարտային, կվինտային

20 **Միքսոլիդիական մաժորը ո՞ր ձայնաստիճանով է տարբերվում բնական մաժորից.**

1) բարձր վեցերորդ
2) ցած յոթերորդ
3) ցած երկրորդ
4) բարձր չորրորդ

21 **Ինչո՞վ պայմանավորված չէ ժողովրդական երգարվեստում երաժշտական լեզվի ինքնատիպությունը.**

1) ժողովրդի աշխարհայացքով
2) այլազգի երաժշտության ազդեցությամբ
3) ժողովրդի կենցաղով և պատմական իրադարձություններով
4) ազգային երաժշտական լեզվամտածողությամբ

22 **Նշված երգերից ո՞րն է հեղինակել Կոմիտաս վարդապետը.**

1) Կանչե կռունկ
2) Կաքավի երգը
3) Խնկի ծառ
4) Գարուն ա

23 **Նշված ձայնակարգերից (լադերից) ո՞րը մաժոր չէ.**

1) իոնական
2) միքսոլիդիական
3) լիդիական
4) էոլական

24 **Ի՞նչ է վանկի եղանակավորումը ժողովրդական երգերում.**

1) վանկի անշտապ, ծոր տալով արտաբերում
2) հնչման ուժգնացումը վանկի արտաբերման ժամանակ
3) հնչման մեղմացումը վանկի արտաբերման ժամանակ
4) վանկի կտրուկ արտաբերում

25 **Նշվածներից ո՞րն է երաժշտական իմաստային և կառուցվածքային ամենափոքր միավորը.**

1) մոտիվ
2) նախադասություն
3) պարբերություն
4) ֆրազ

26 **Նշել ճիշտ տողը, որտեղ նշվածը մոտիվ չէ.**

1) քորեյ
2) ամֆիբրախիական
3) ինտոնացիա (ձայնելևէջ)
4) յամբ

27 **Նշվածներից ո՞րը չափակշռութային (մետրառիթմական) միավոր չէ.**

1) նախաշեշտ
2) մոտիվ
3) հետշեշտ կամ թույլ վերջավորություն
4) շեշտ

28 **Ո՞վ է հայկական ազգային բալետի հիմնադիրը.**

1) Արմեն Տիգրանյան
2) Արամ Խաչատրյան
3) Տիգրան Չուխաճյան
4) Ալեքսանդր Սպենդիարյան

29 **Ո՞վ է հայկական ազգային սիմֆոնիկ երաժշտության հիմնադիրը.**

1) Արմեն Տիգրանյան
2) Արամ Խաչատրյան
3) Տիգրան Չուխաճյան
4) Ալեքսանդր Սպենդիարյան

30 **Նշված բալետներից ո՞րն է ստեղծել կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանը.**

1) «Ձյունե թագուհին»
2) «Քնած գեղեցկուհին»
3) «Հավերժական կուռք»
4) «Չոփչոփիկը»

31 **Ո՞վ է Հայաստանում առաջին սիմֆոնիկ նվագախմբի ստեղծողը.**

1) Տիգրան Չուխաճյան
2) Ալեքսանդր Սպենդիարյան
3) Հարո Ստեփանյան
4) Արամ Խաչատրյան

32 **Նշված երգերից ո՞րը Սայաթ-Նովայի երգը չէ.**

1) «Ես մեկ ծառ եմ ծիրանի»
2) «Քամանչա»
3) «Արի՛ ինձ անգաճ կալ, ա՛յ դիվանա սիրտ»
4) «Դուն էն գլխեն»

33 **Նշված երգերից ո՞րը ժողովրդական երգ չէ.**

1) «Հաբրբան»
2) «Հարի հարալո»
3) «Անձրևն եկավ»
4) «Քելե, քելե»

34 **Ո՞ր տողի բոլոր երգերն են Ռոբերտ Պետրոսյանինը.**

1) «Խուտուտ-մուտուտ», «Երգ մայրիկիս», «Նոր տարվա երգ-պար», «Նապաստակի երգը»
2) «Արջամուկը», «Զանգն առաջին», «Հայաստան», «Հովիվ»
3) «Հայաստան», «Ուղիղ կարգով», «Իմ ուսուցիչ», «Աստղիկների երգը»
4) «Իմ ուսուցիչ», «Աշուն», «Զա՜ն հայրենիք», «Անձրևի երգը»

35 **Ո՞վ է հայկական ազգային առաջին օպերայի հեղինակը.**

1) Ալեքսանդր Սպենդիարյան
2) Արմեն Տիգրանյան
3) Տիգրան Չուխաճյան
4) Արամ Խաչատրյան

36 **Ո՞վ է հայկական առաջին ազգային դասական օպերայի հեղինակը.**

1) Ալեքսանդր Սպենդիարյան
2) Գևորգ Արմենյան
3) Հարո Ստեփանյան
4) Արմեն Տիգրանյան

37 **Նշվածներից ո՞րն է հայկական առաջին օպերան.**

1) Ա. Սպենդիարյանի «Ալմաստ»
2) Տ. Չուխաճյանի «Արշակ Բ»
3) Ա. Տիգրանյանի «Դավիթ-Բեկ»
4) Ա. Տիգրանյանի «Անուշ»

38 **Նշված երաժշտաթատերական երկերից ո՞րն է բալետը.**

1) «Դավիթ Բեկ»
2) «Լեբլեբիջի Հոր-հոր աղա»
3) «Խորտակում»
4) «Անուրջների լիճը»

39 **Նշված երաժշտաթատերական երկերից ո՞րն է Կոմիտաս վարդապետի անավարտ օպերան.**

1) «Անուշ»
2) «Գայանե»
3) «Խաչատուր Աբովյան»
4) «Դավիթ Բեկ»

40 Նշել Վիեննական դասական դպրոցի ամենաավագ կոմպոզիտորին.

1) Լ. վան Բեթհովեն
2) Յ. Հայդն
3) Յ. Ս. Բախ
4) Գ. Ֆ. Հենդել

41 Ո՞ր կոմպոզիտորն է կիրառել ձայնը և երգչախումբը սիմֆոնիայում.

1) Ջ. Ռոսինի
2) Լ. վան Բեթհովեն
3) Յ. Ս Բախ
4) Պ. Չայկովսկի

42 Բեթհովենի երկը, որի հիմքում ընկած է մարդկությանն ուղղված եղբայրության ու միասնության կոչը.

1) սիմֆոնիա թ. 9
2) սիմֆոնիա թ. 5
3) սիմֆոնիա թ. 3
4) սիմֆոնիա թ. 6

43 Սիմֆոնիա բառը հունարենից թարգմանաբար նշանակում է

1) համահնչունություն
2) համաձույլ
3) համաձայնություն
4) համադրություն

44 Ին՞չ գործիքի համար է գրված Յ. Ս. Բախի Տոկկատ և ֆուգա (ռե-մինոր) ստեղծագործությունը.

1) դաշնամուր
2) երգեհոն
3) ֆիսհարմոն
4) կլավեսին

45 **Ո՞ր նվագարանն է բնութագրում Պապիկին Պրոկոֆևի «Պետյան և գայլը» սիմֆոնիկ հեքիաթում.**

1) շեփոր
2) թավջութակ
3) կլառնետ
4) ֆագոտ

46 **Եվրոպայում ո՞ր դարում է ստեղծվել ու զարգացել կոնցերտի ժանրը.**

1) XVII - XVIIIդդ
2) XVI - XVIIդդ
3) XV - XVIդդ
4) XVIII – XIX դդ

47 **Նշել կոմպոզիտորին, ով գրել է շուրջ 500 կոնցերտ.**

1) Ա. Վիվալդի
2) Վ. Ա. Մոցարտ
3) Յ. Հայդն
4) Լ. Բեթհովեն

48 **Նշել «Կախարդական սրինգ» օպերայի գործող անձանց.**

1) Կերուբինո, Բարտոլո, Ռոզինա
2) Կոմամդոր, Լեպորելո, Ցերլինա
3) Էբալ, Մելիա, Զեֆիր
4) Պամինա, Տամինո, Զարաստրո

49 **Ինչպե՞ս է Բեթհովենը անվանել իր թ. 14 սոնատը.**

1) սոնատ-ֆանտազիա
2) լուսնի սոնատ
3) լույսի սոնատ
4) սոնատ-էպիտաֆիա

50 Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի.



1) Է. Գրիգ «Նորվեգական պար»
2) Յ. Վ. Բրամս «Հունգարական պար»
3) Սվիրիդով «Ռոմանս»
4) Ֆ. Լիստ «Հունգարական ռապսոդիա»

51 Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի.



1) Վ. Մոցարտ «Օրորոցային»
2) Է. Գրիգ «Առավոտ»
3) Ֆ. Շոպեն «Վալս»
4) Ֆ. Շուբերտ «Երաժշտական ակնթարթ»

52 **Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի.**



1) Է. Գրիգ «Օզեի մահը»
2) Ֆ. Շոպեն Մազուրկա
3) Ֆ. Շուբերտ «Երաժշտական ակնթարթ»
4) Վ. Մոցարտ «Dies irae»

53 **Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի.**



1) Տ. Մանսուրյան Մենուետ «Զյունե թագուհի» բալետից
2) Վ. Մոցարտ «Լակրիմոզա»
3) Յ. Շտրաուս «Գարնանային ձայներ»
4) Ա. Այվազյան «Հայկական ռապսոդիա»

54 **Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի.**



1) Է. Գրիգ «Նորվեգական պար»
2) Յ. Վ. Բրամս «Հունգարական պար»
3) Վ. Մոցարտ «Մենուետ»
4) Ֆ. Լիստ «Հունգարական ռապսոդիա»

55 **Նշված երաժշտաթատերական երկերից ո՞ր երկուսը օպերաներ չեն.**

1) «Անտունի»
2) «Խաչատուր Աբովյան»
3) «Սևան»
4) «Արշակ Բ»
5) «Ալմաստ»

56 **Նշված երաժշտաթատերական երկերից ո՞ր երկուսը բալետներ չեն.**

1) «Երջանկություն»
2) «Հավերժական կուռք»
3) «Սայաթ-Նովա»
4) «Անուրջների լիճը»
5) «Հերոսուհին»

57 **Նշված եզրույթներից ո՞ր երկուսը երաժշտության արտահայտչամիջոցներ չեն.**

1) մոտիվ
2) հնչողության ուժգնություն (դինամիկա)
3) ֆրազ
4) ռիթմ
5) տեմպ

58 **Նշել երկու տարբերակները, որտեղ կառուցված են միայն մաքուր կվարտա ինտերվալներ դեպի վեր.**

1) լա - ռե, մի բեմոլ – լա բեմոլ, ֆա դիեզ - սի
2) ռե - սոլ, մի – լա բեմոլ, լա - ռե
3) սի բեմոլ - մի բեմոլ, դո դիեզ - ֆա դիեզ, ֆա - սի բեմոլ
4) ռե - սոլ բեմոլ, սի բեմոլ - մի բեմոլ, ֆա - սի բեմոլ
5) սի - մի, ռե բեմոլ - սոլ, դո - ֆա

59 **Նշել երկու տարբերակները, որտեղ թվարկված են միայն չափավոր տեմպերը.**

1) Sostenuto, Allegretto, Andantino
2) Andantino, Allegro, Allegretto
3) Moderato, Allegro, Sostenuto
4) Andante, Moderato, Allegretto
5) Andantino, Sostenuto, Allegro

60 **Նշվածներից ո՞ր երկու շարքերում են ներկայացված միայն մելիզմները /զարդահնչյունները/.**

1) մորդենտ, ֆորշլագ, տրել
2) տրեմոլո, արպեջիո, ֆիգուրացիա
3) գրուպետտո, մորդենտ, տրել
4) ֆորշլագ, տրեմոլո, մորդենտ
5) գրուպետտո, արպեջիատտո, տրիոլ

61 **Ընտրել տրված լուծված երաժշտամաթեմատիկական օրինակներից երկու ճիշտ տարբերակները.**

1) մ.2 + փքց.5 = մ.6
2) փ.6 + մաք.1 = փ.7
3) փ.3 + փ.3 = փքց.5
4) մաք.5 + մաք.4 = մաք.8
5) մ.3 +մ.3 = մաք.5

62 **Ընտրել տրված լուծված երաժշտամաթեմատիկական օրինակներից երկու սխալ տարբերակները.**

1) մ.7 - մ.6 = մ.2
2) փքց.5- մծց.4 = մ.2
3) փ.6 – փ.3 = մաք.4
4) մաք.8 – մ.3 = փ.6
5) մծց.5 – մծց.2 = մ.3

63 **Նշել երկու ճիշտ պատասխանները.**

1

2



3

4

5

1) Լեո Դելիբ
2) Նիկոլայ Ռիմսկի-Կորսակով
3) Կամիլ Սեն-Սանս
4) Ֆելիքս Մենդելսոն
5) Արտուրո Տոսկանինի

64 Նշել երկու սխալ պատասխանները.

1

2

3

4

5

1) «Արամ Խաչատրյան» համերգասրահ
2) Սպենդիարյանի անվ. օպերային թատրոն
3) Կոմիտասի թանգարան-ինստիտուտ
4) Կամերային երաժշտության տուն
5) «Առնո Բաբաջանյան» համերգասրահ

65 Նշել ռոմանտիզմին պատկանող երկու կոմպոզիտորներին.

1) Վ. Մոցարտ
2) Ֆ. Մենդելսոն
3) Ջ. Գերշվին
4) Ա. Վիվալդի
5) Ֆ. Շոպեն

66 **Համապատասխանեցնել օպերաները հեղինակներին.**

Ա) «Արշակ Բ»
Բ) «Եվգենի Օնեգին»
Գ) «Ձյունանուշ»
Դ) «Դավիթ Բեկ»

1) Յ. Ս. Բախ
2) Պ. Չայկովսկի
3) Ա. Տիգրանյան
4) Ֆ. Շոպեն
5) Ն. Ռիմսկի-Կորսակով
6) Տ. Չուխաճյան

Ա	Բ	Գ	Դ

67 **Համապատասխանեցնել երաժշտական տերմիններն իրենց սահմանումներին.**

Ա) պարբերություն
Բ) մոտիվ
Գ) կադանս
Դ) ցեզուրա

1) երաժշտական մտքի հարմոնիկ եզրափակում,
2) երաժշտական մտքի շարադրման ընթացքում առանձին իմաստ պարունակող կից կառույցների բաժանման պահը,
3) համեմատաբար ավարտուն երաժշտական միտք պարունակող ամենափոքր կառույցը:
4) երաժշտական մտքի կառուցվածքի փոքրագույն մասնիկը, որը պարունակում է մեկ շեշտ,
5) մի շեշտից մյուսն ընկած հատվածը,
6) պարբերության բաղկացուցիչ մաս,

Ա	Բ	Գ	Դ

68 **Համապատասխանեցնել երաժշտական ստեղծագործությունները հեղինակած կոմպոզիտորներին.**

Ա) «Գարնանային ձայներ» վալս
Բ) «Ռապսոդիա բյուզի ոճով»
Գ) «Զյունանուշ» օպերա
Դ) «Մոխրոտը» բալետ

1) Ս. Պրոկոֆև
2) Ջ. Գերշվին
3) Ն. Ռիմսկի-Կորսակով
4) Պ. Չայկովսկի
5) Յ. Շտրաուս-հայր
6) Յ. Շտրաուս-որդի

Ա	Բ	Գ	Դ

69 **Համապատասխանեցնել գրական ստեղծագործությունները հեղինակներին.**

Ա) «Զոն Ուրախության»
Բ) «Դիմակահանդես»
Գ) «Քնած գեղեցկուհի»
Դ) «Ռուսլան և Լյուդմիլա»

1) Շ. Պերո
2) Ֆ. Շիլեր
3) Լ. Ռելշտաբ
4) Մ. Լերմոնտով
5) Ա. Պուշկին
6) Վ. Մուլլեր

Ա	Բ	Գ	Դ

70 **Համապատասխանեցնել օպերաները հեղինակներին.**

Ա) «Դոն Ժուան»
Բ) «Ոսկե աքաղաղը»
Գ) «Ինդիանա»
Դ) «Անուշ»

1) Վ. Մոցարտ
2) Ն. Տիգրանյան
3) Ա. Տիգրանյան
4) Տ. Չուխաճյան
5) Ժ. Բիզե
6) Ն. Ռիմսկի-Կորսակով

Ա	Բ	Գ	Դ

71 **Համապատասխանեցնել սիմֆոնիաները հեղինակած կոմպոզիտորներին.**

Ա) «Պատանեկան»
Բ) Քառասուներորդ սիմֆոնիա
Գ) Հինգերորդ սիմֆոնիան, որի թեմայի մասին հեղինակը ասել է. «Այսպես է ճակատագիրը բախում դուռը»
Դ) «Զանգով սիմֆոնիա»

1) Լ. Բեթհովեն
2) Ա. Խաչատրյան
3) Ֆ. Մենդելսոն
4) Վ. Մոցարտ
5) Է. Միհրանյան
6) Պ. Չայկովսկի

Ա	Բ	Գ	Դ

72 **Համապատասխանեցնել կոմպոզիտորները՝ ազգություններին.**

Ա) Գ. Հենդել
Բ) Ֆ. Շոպեն
Գ) Յ. Շտրաուս
Դ) Է. Գրիգ

1) ավստրիացի
2) նորվեգացի
3) իտալացի
4) գերմանացի
5) հունգարացի
6) լեհ

Ա	Բ	Գ	Դ